№ 2 Յունվարի 10 (22) 1881 Յունվարի 10 (22) № 2

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ոռնն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամ. 5 ռ., չորս ամ. 4 ռ., երեք ամ. 3. ռ. երկու ամ. 2 ռ. և մի ամ. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարմնամարզութիւն։— Ներքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի յօդուածները։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ —Մշակի» հեռագիրներ։ —Յայտարարութիւններ։ —Բանասիրական։ Գաւառական մամուլ։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

—

Այս օրերս բացվեցաւ Թիֆլիսում մի շատ օգտաւէտ հիմնարկութիւն, այն է մարմնամարզական դահլիճ Գունիբեան հրապարակի վրա։

Մենք չենք կրկնի այստեղ հին, մաշված ճշմարտութիւնը թէ ,,առողջ մարմնի մէջ առողջ հոգի է լինում",—այդ ընդհանրապէս ուղիղ միտքը կարող է, ի հարկէ, բացառութիւնների վերաբերութեամբ և սխալ լինել, որովհետև շատ անգամ մենք տեսնում ենք որ թէ արական և թէ իգական անհատը, որ ֆիզիկապէս ամեն կողմից գեղեցիկ, զօրեղ և առողջ է, լինում է բարոյապէս և մտաւորապէս թոյլ և անընդունակ, տեսնում ենք և հակառակ բացառութիւններ,—բայց մի բան անուրանալի է, որ նոր սերունդի դաստիարակութիւնը չը պէտք է լինի միակողմանի։

Մարմնի այժը, ի հարկէ, չը պէտք է զարգացնել ի վնաս մտաւոր և հոգեկան զարգացման, չը պէտք է նոյնպէս մտաւոր և հոգեկան զարգացումը կատարվի ի վնաս ֆիզիկական զարգացման։ Խելացի մանկավարժութիւնը իրաւացի կերպով պահանջում է երկու կողմի զուգընթաց և հաւասարաչափ զարգացում։

Նայեցէք մեր այժմեան նոր սերունդի վրա, նայեցէք մեր երիտասարդ թէ տղաների և թէ աղջիկների վրա,—և դուք կը համոզվէք որ մենք նրանց մտաւոր կողմը զարգացնում ենք ի վնաս ֆիզիկական զարգացման։ Մեր գիմնազիաներում, ինստիտուտներում, պանսիօններում և հոգևոր դպրոցներում տղաները և աղջիկները ամբողջ օր, փակված դասատներում նստած, որտեղ շատ անգամ օդափոխութիւնը շատ պակասաւոր է լինում, մէջքը ծռած անդադար դասեր են սերտում, իսկ ֆիզիկապէս մենք նրանցից պատրաստում ենք թոյլ, հիւանդոտ, նիհար, շատ անգամ այլանդակ էակներ....

Այդ դաստիարակութեան վրնասակար ուղղութեան հետքերը մենք ամենքս աւելի կամ պակաս կրում ենք մեզ վրա։

Մարմնամարզութիւնը (դիմնաստիկա) ամենալաւ միջոց է վերականգնեցնել հաւասարակշռութիւնը նոր սերունդի մտաւոր և ֆիզիկական զարգացման մէջ։

Այդ պատճառով մենք չենք կարող ուրախութեամբ չը ողջունել այնպիսի մի հիմնարկութեան, ինչպէս պ. Լօպէսից Թիֆլիզում հիմնած մարմնամարզական դահլիճը, որտեղ մեր ուսում առնող նոր սերունդը միջոց կունենայ գիմնաստիկայով պարապել և լատինական ու յունական քերականութիւնները սերտելուց յետոյ, վարժվել ֆիզիկապէս և կազդուրել մարմնի թուլացած և փչացած ոյժերը։

Խորհուրդ կը տայինք մեր քաղաքի բոլոր դպրոցական վարչութիւններին յանձնել պ. Լօպէսին իրանց աշակերտներին և աշակերտուհիներին, նրանց մարմնամարզութեան մէջ վարժեցնելու համար։

Մանաւանդ այդ խորհուրդը կը տանք Ներսիսեան դպրոցին, որի լուսաւորված հոգաբարձութիւնը և բարձր ուսում ստացած տեսուչը ուշադրութեան արժանի այն համոզմունքի են հասել թէ մանուկների առողջութիւնը շատ երկրորդական բան է։

Մեր բոլոր բժիշկներին ուշադրութիւն ենք դարձնում պ. Լօպէսի օգտակար և անհրաժեշտ հիմնարկութեան վրա։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

—

Արդէն ինն ամիս է Երևանում հրատարակվում է մի շաբաթաթերթ, որը կրում է «Պսակ» անունը։

Այս ամիսը «Պսակի» հրատարակութեան առաջին տարվայ վերջինն է։ «Պսակը» № 32-ից շաբաթական $1^1/_2$ թերթ է հրատարակվում և դրանով խմբագրութիւնը ուզում է լրացնել մինչև յունվարի կէսը խմբագրական ամբողջ տարին։ (№ 32) *)

Այս ժամանակամիջոցին «Մշակը» իր ընթերցողներին ուշադրութիւնը չէր դարձնում այդ լրագրի վրա, միայն, որքան մենք յիշում ենք, դեռ հրատարակվելուց առաջ, երբ տվվեցան յայտարարութիւններ «Պսակի» հրատարակվելու մասին, «Մշակը» երկու տող նուիրեց այդ լրագրին, նկատելով՝ որ միանգամից ծիծաղելի է հրատարակել Երևանում մի «գրականական, պատմական և մանկավարժական» փոքրիկ լրագիր։ յետոյ դարձեալ երկտող նկատողութեան մէջ ցոյց տուեց՝ ինչ ուղղութիւն պէտք է ունենայ մի գաւառական թերթ։ Ահա, անցնում են ամիսներ և, վերջապէս, «Մշակի» մէջ երևում են պ. Դաղեանի երկու յօդուածները, որոնցից մէկը (Մշ. № 143) ամբողջապէս նուիրած է ոչ թէ առհասարակ «Պսակին», այլ նրա համարներից մէկի (№ 15) մէջ տպված երևելի յօդուածին «Յառաջադիմութեան մասին հայրերի հրահանգը» վերնագրով, իսկ երկրորդի մէջ (Մշ. № 170) ի միջի այլոց պ. Դաղեանցը ասում է «Պսակ» լրագրի վրա ևս մի քանի խօսք։ Վերջապէս ամենավերջին ժամանակը «Մշակի» մէջ տպվեցան մի քանի թղթակցութիւններ Երևանից։

Ահա այն բոլորը, ինչ տպվել է, դարձեալ կրկնում ենք, որքան մենք յիշում ենք, «Մշակի» մէջ «Պսակ» լրագրի վերաբերմամբ։ Ըստ երևոյթին «Մշակը» աւելորդ է գտել խօսել մի այնպիսի լրագրի վրա, որպիսին է, գոնէ մինչև այժմ, «Պսակը», այնուամենայնիւ մենք նուիրում ենք այդ լրագրին մի քանի խօսք։

«Պսակը» հաւատացնում էր, որ նա ունի մի քանի հարիւր ստորագրող (դեռ ապրիլին, № 7)։ հաւանական է, որ նրա բոլոր ստորագրողները կարդում են այդ լրագիրը ծայրէ ի ծայր։ Ցանկանալով տպատել «Մշակի» ընթերցողներին մի այդպիսի չարչարանքից, համեստութեամբ առաջարկում ենք միայն մի յօդուած, որի մէջ, կարող ենք ասել, ամփոփված է ինն ամսվայ (համարեա ամբողջ տարուայ) «Պսակը»։ Իսկ միւս կողմից՝ որովհետև այդ թերթի հրատարակութեան առաջին տարին համարեա վերջացել է և «Պսակի» պ. խմբագիրը ի հարկէ իր ամբողջ տարվայ գործունէութեան մէջ հաշիւ կը տայ իր ընթերցողներին, մեր այս փոքրիկ յօդուածը, յուսով ենք, կօգնի պ. խմբագրին այդ գործի մէջ։

***

Այս տարվայ սկզբում, այսինքն մի այնպիսի ժամանակ, երբ ամեն մի ուսանող կարծես վախենում էր իր շուաքից, երբ ռուսաց ամբողջ մամուլը վախենում էր համակրութեամբ վերաբերվել դէպի ուսանողները, խրախոյս տալ նրան գործելու, մի այսպիսի անցած տխուր ժամանակ, ասում ենք մենք, Ռուսաստանի միւս ծայրում, Երևան քաղաքում, դուրս է գալի «Պսակի» առաջին համարը։

Ահա ինչ է ասում պ. Վ. Պապաջանեանցը, այդ լրագրի խմբագիրը, դիմելով ուսանողներին.

«... Նոցա (այսինքն՝ գիւղացւոց) կրթութեան միակ աղբիւրն է ուսանողութիւնը. կրթել, դաստիարակել հասարակ ժողովուրդը կարող է միայն կրթվածն ու դաստիարակվածը։ Ուրեմն ձեզ եմ դիմում ՈՒՍԱՆՈՂՆԵՐ. Դուք, որ հասկացել էք տկարութիւնը, կարող էք և Դուք միայն բուժել...» և այլն և այլն (№ 1)

—«Либералъ! Чертъ вазьми!» անչուշտ կարծեցին անհեռատեսներից ոմանք, չիմանալով «Պսակի» պ. խմբագրի փորացաւը։ Բայց աւելի հեռատեսները, մանաւանդ կարդալով ինն հայ ուսանողների (Մոսկվայի) մաղթանքը, փոքր ինչ ժպտեցին և մտածեցին. «կապրենք, կը տեսնենք։»

Տեսէք, ընթերցող, թէ ինչպէս լաւ էին հասկացել Մոսկվայի վերոյիշեալ հայ ուսանողները (որոնց թւում ևս տեսնում ենք՝ պ. պ. Հ. Առաքելեանցին և Ս. Դաղեանցին) հայոց մի գաւառական թերթի հրատարակութեան նշանակութիւնը և ինչպէս էին շնորհաւորում նրա ծնունդը։

«.... նկատելի է մի այնպիսի օրգանի պակասութիւնը, որ իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնէր տեղական ժողովրդի կենսական—տնտեսական և մտաւոր խնդիրների վրա, երբ դատարկ է լրագրի այն տեղը, որ զբաղվէր միայն ներքին, բուն ժողովրդական հարցերով, մի այդպիսի ժամանակ ամեն մի ձգտում լցուցանելու այդ դատարկութիւնը, պէտք է ամենայն համակրութեամբ ընդունվի նրանցից, որոնց համար թանգ է և ցանկալի գաւառական ժողովրդի բարօրութիւնը։» (№ 1)

Անցնում է մօտ ամիս ու կէս դեռ պ. Պապաջանեանցի համակրութիւնը չէ սառել դէպի ուսանողները, ահա ինչ է ասում նրա օրգանը Մուրճի բերանով.

«... կրկնում ենք պ. Ասիացուն. որ... (և այլն և այլն), որ ուսանողական կրթիչ ազնուութեան հակապատկեր դարվիշի «խենթի» ցնորական խենթութիւններով հրապուրված ուսանողների սուրբ կոչումը (լաւ ուշադրութիւն դարձրէք), պատկառելի դէվիզը չաղաւաղի, չը սրբապղծի հասարակութեան առաջ...» (№ 8)

Այս խօսքերը ասած են պ. Մէլիքզադէի հայոց ուսանողութեան պատկերի մասին, որը տպվեցաւ «Մշակում»։ Զենք կարող չը խոստովանվել, որ այդ պատկերի մէջ կային և չափազանցութիւններ (պ. Մէլիքզադէն անկասկած աչքի առաջ ունեցել էր մեր այժմեան գործիչներին, որոնք դուրս են եկել այդ շրջանից և, նրանց վրա հիմնվելով և փոքր ինչ էլ ազատութիւն տալով իր բանաստեղծական ձիրքին, նկարել էր շատ տխուր պատկեր), բայց այդ չափազանցութիւնները իր ժամանակին հերքեց պ.

---

*) Փակագծերի մէջ դրած թուանշանները «Պսակ» լրագրի համարներն են ցոյց տալիս։

Մեր կարծիքով մեր բժիշկների պարտաւորութիւնն է յորդորել ծնողներին և դպրոցների վարչութիւններին ուղարկել մանուկներին մարմնամարզական դահլիճը, յորդորել և հասակ առած անհատներին օգուտ քաղել այդ օգտակար հիմնարկութիւնից, որովհետև յայտնի է որ մարմնամարզութիւնը պահպանում է և հասակ առածներին շատ և շատ հիւանդութիւններից, պնդացնելով մարմնի ոյժերը: Եւրոպայի իւրաքանչիւր մի քաղաքի մէջ կան հասակ առած մարդիկներից բաղկացած մարմնամարզական ընկերութիւններ:

Իսկ իրան, պ. Լոպէսին, խորհուրդ կը տանք հրաւիրել մի մշտական բժիշկ իր հիմնարկութեան համար, եթէ նա ինչպէս յայտնել է իր յայտարարութեան մէջ, կամենում է մտցնել բժշկական մարմնամարզութիւնը, մանաւանդ այլանդակված կազմուածք ունեցող մանուկների համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ՑՈԴՈՒԱԾՆԵՐԸ

—

„Голосъ“ լրագիրը իր անցեալ տարվայ համարների մէջ երկու առաջնորդող յօդուածներ է տպել ռուսաց եկեղեցու և հոգևորականութեան մասին, որոնցով յիշեցնում է ընթերցողներին հոգևոր սինոդի նոր պրօկուրօրի նշանակվելը և յայտնում է իր յոյսերը և ցանկութիւնները ուղղափառ եկեղեցու հարկաւոր վերանորոգութիւնների մասին:

Ցիշեցնելով այն փաստը, որ ռուս ժողովրդի հասարակ դասակարգը զանազան աղանդներ է ընդունում, իսկ բարձր դասը զանազան ընկերութիւններ է կազմում, որոնք բոլորովին անտարբեր են մնում եկեղեցական և կրօնական շահերի վերաբերութեամբ, համաձայնելով այն կարծիքի հետ, թէ դրա մէջ մասամբ մեղաւոր է հոգևորականութիւնը, լրագիրը մատնացոյց է լինում այդ երևոյթի հետևեալ պատճառների վրա. որ ուղղափառ եկեղեցական արարողութիւնները բաւական անհասկանալի և ձանձրացնող են ժողովուրդի համար և մասամբ անկարգ, որ եկեղեցու մէջ կարդացածներից և երգածներից շատ բան անհասկանալի է ոչ թէ միայն ծխականների, այլ և հոգևորականներից շատերի համար, որ եկեղեցական գրքերի թարգմանութիւնները անբաւականացուցիչ են, որ այդ թարգմանութիւնները տեղ տեղ մութ և անհասկանալի են և մասամբ անկանոն:

Այս պակասութիւնները ցոյց տալուց յետոյ լրագիրը կարծիք է յայտնում, թէ հարկաւոր է Ռուսաստանի զանազան քաղաքներում մասնաժողովներ կազմել յուսաւորված և գիտական հոգևորական անդամներով՝ եկեղեցական գրքերի անհասկանալի տեղերը ուղղելու և բացի այդ զանազան աղօթքների և եկեղեցական երգերի լեզուն փոխելու և այդ լեզուն հասարակ և ընդհանրութեան համար դիւրըմբռնելի դարձնելու նպատակով: Բացի այդ „Голосъ“ կարծում է, որ կտրելի էր եկեղեցական արարողութեան ժամանակ մի քանի անգամ կրկնվող աղօթքները, մաղթանքները և միակոչման ընթերցանութիւնը կրճատել և այդպիսով լաւացնել նրանց յատկութիւնը, փոքրացնելով քանակութիւնը:

Լրագիրը փաստերով ապացուցանում է, որ այդպիսի վերանորոգութիւնը նոր աղանդ չի ծագեցնի և ուղղափառ եկեղեցու ամբողջութեանը չի վնասի:

„Այժմ վանքերի մէջ եկեղեցական արարողութիւնները երկար են, նկատում է լրագիրը, ծխականների մէջ աւելի կարճ, իսկ պալատական, պետական և մասնաւոր եկեղեցիների մէջ արարողութիւնները կրճատվում են և փոփոխվում են: Այդ փոփոխութիւններից կախված են նրանց լաւ յատկութիւնները, որոնք մեզ պակասում են: Շտապով կարդալը և երգելը, մի և նոյն ժամանակ ընթերցողութիւնը չը վերջացրած երգեցողութեան սկսելը, աղօթողները տաճարից անդադար դուրս գնալը և ներս մտնելը, երեխաների լացը և աղաղակները, դրանք բոլորն էլ սովորական այնպիսի երևոյթներ են մեր ծխական եկեղեցիների մէջ, որոնք կարող են խանգարել ամենամեծ աստուածապաշտական տրամադրութիւնը: Եթէ կատարվեն վերոյիշեալ վերանորոգութիւնները, արտաքին կարգապահութիւնը ինքն ըստ ինքեան կը վերականգնվի, քանի որ աղօթքները լաւ կը հասկանան բոլորը, հետևապէս չեն ձանձրանայ և նրանց աստուածապաշտական տրամադրութիւնն էլ չի խանգարվի“:

„Голосъ“ կարծում է, որ եկեղեցական հասկանալի արարողութիւններով զրաւված ժողովուրդին պէտք է աւելի մատչելի լինեն եկեղեցական շահերին և պէտքերին վերաբերեալ հարցերը: Այդպիսով կը բարձրվին եկեղեցական տնտեսութիւնը, հաշիւները, աղքատների հովանաւորութիւնը և ծխական ուսումնարանների դրութիւնը, որովհետև դրանք հասարակական գործ կը դառնան:

Խօսելով ռուս հոգևորականների դրութեան մասին, լրագիրը նկատում է, որ այդ դրութիւնը պէտք է մեծ փոփոխութիւնների ենթարկվի թէ ներքին, թէ արտաքին և թէ բարոյական կողմերից:

Մեր բարձր հոգևորականութիւնը, ասում է լրագիրը, պէտք է հեռու լինի աստիճանաւորութենից և անմատչելի չը լինի: Եպիսկոպոսները պէտք է կատարեալ հովիներ լինեն, մատ լինեն ցածր աստիճանի հոգևորականներին և ժողովուրդին: Ուրեմն եպիսկոպոսական աստիճանը ստանալու պայմաններն էլ պէտք է փոփոխվեն:

Կուսակրօններից վերջին ժամանակներում շատ քիչ եպիսկոպոսներ են ընտրվում, որոնք բարոյական և գիտական յատկութիւններով գերազանց լինէին: Մի և նոյն ժամանակ պատահաբար և բոլորովին իզուր եպիսկոպոսական աստիճանը յատկացրած է միայն կուսակրօններին: Եկեղեցական ոչ մի օրէնք այդ չէ պահանջում, ընդհակառակը, քրիստոնէական սկզբնական գաղափարի համեմատ, կուսակրօնները պէտք է հեռու մնան հասարակական վարչական գործունէութենից, նրանց համար պէտք է խորթ լինեն կենսական և գործնական շահերը:

„Մենք չենք զարթեցնում պսակված եպիսկոպոսների վիճելի հարցը, ասում է „Голосъ“, այլ պնդում ենք, որ եպիսկոպոս լինելու համար անպատճառ հարկաւոր չէ կուսակրօն լինել և այդ պաշտօնը պէտք է մատչելի անել ժողովրդական հոգևորականութեանը: Այլի քահանաներից շատերը, առանց կուսակրօնութիւն ընդունելու, կարող են եպիսկոպոս լինել: Այսպիսի եպիսկոպոսները աւելի ամուր կապված կը լինեն թէ միւս հոգևորականների և թէ ժողովրդի հետ և նրանց յարաբերութիւնները վերջինների հետ աւելի թարմ, մարդկային և բնական կը լինեն“:

Շարունակութեան մէջ լրագիրը կարծիք է յայտնում, որ հոգևորականներին պէտք է հեշտացնվեն այդ կոչումից հեռանալու միջոցները, որ հոգևորականների կրթութեան և հովուական պաշտօնի համար պատրաստվելու միջոցները պէտք է լաւացնել, որ նրանց նիւթական դրութիւնը պէտք է ապահովել, որ վերջապէս նրանց վարձատրվելու մի քանի ստոր ձևերը պէտք է փոփոխել և այլն:

Վերջը լրագիրը նկատում է, որ եթէ հոգևորական դասի այդ անաջող պայմանները չը փոխվեն, մարդիկ կը ձեռնադրվեն ոչ թէ իրանց կոչման համեմատ, այլ ուրիշ նպատակներից դրդված:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 25-ին դեկտեմբերի 80

«Մշակի» 199 և 228 համարներում «Վրոյր» ըստորագրութեամբ մի նամակագիր խօսելով լուսաւորչական հայերի դէպի բողոքականների ունեցած ատելութեան մասին, ի միջի այլոց յիշում է բողոքական Աստուրին հրապարակաւ գանակոծելը և նրան սպանելը բողոքականութեան համար: Պարտաւորութիւն եմ համարում պ. Վրոյրին հետևեալ պատասխանը տալ: Բողոքական Աստուրը իմ հարազատ հայրս է, նրան ոչ մի ժամանակ չեն ծեծել, նա այն կորած մոլորած մարդիկներից չէր, որ համարձակվէին նորան փողոցում կամ մի այլ տեղ ծեծել: Հօրս սպանեցին Երևանից 17 վերստ հեռաւորութեամբ Բէգզադալու գիւղում 1876 թուին. սպանողը քահանայ էր: Հայրս գնացել էր տէր հօր տունը նորանից իր 800 բուբլի ստանալիքի համար, քահանան կարծելով

Դաղեանցը «Մշակում», որի մէջ ևս Երևեցաւ և Մօսկվայի կարծեմ 20 հայ ուսանողների բողոքը, բայց... բայց առաւել լաւ է լռել այդ բողոքի ստեղծվելու մասին. միայն այսքան կարող եմ ասել, որ Մօսկվայի հայ ուսանողութիւնը, որքան ես անձամբ համոզվեցայ, իմանում է յարգել և սիրել այնպիսի «դարվիշ»-ներին, որպիսին մեր տաղանդաւոր Բաֆֆին է:

Մի օրգանից, որը ուզում էր ցոյց տալ իրան ընդունակ հասկանալու թէ՝ ինչ է ուսանողների սուրբը կոչումը etc. etc., ի հարկէ, ընթերցող, դուք չէիք կարող սպասել հետևեալը.

Պ. Թ. Զ., իբր թէ ցոյց տալով Դաղեանցին, որ նրան ամենեին աւելորդ էր (Մշ. № 143) յիշել իր ուսանող լինելը (ինչու է յիշել այդ պ. Դաղեանցը ցոյց կը տանք ներքև), ասում է.

«... Լսեցիք, պարոններ, Մօսկ. համալսարանի իրաւաբ. բաժնի ուսանող և գիտէք ինչ է նշանակում ուսանող—մի ամենիմաստ, բազմագէտ....» չենք ուզում շարունակել արտագրել զանազան երևխայական ծաղրութիւնների ամբողջ մի շարք. Այստեղ մենք ուշադրութիւն կը դարձնենք պ. Թ. Զ.-ի այն խօսքերի վրա, որոնք վերաբերվում են առհասարակ ուսանողութեան.

«.... Բայց ներեցէք, պ. Դաղեանց, մեք այդ անունից (այսինքն ուսանող) շացողներից չենք, այդ նոր բառ չէ մեզ համար, մեք տգէտ ամբոխի դաղափարը չունենք ձեր ուսանողութեան վրա, մենք համոզված ենք թէ՝ «էշը միշտ էշ կը մնայ, թէ կուզ Մեքքայ էլ տանես նըբան....» (№ 30)

Բրավո... որ Ցիտովիչն է խօսացել աւելի համակրութեամբ.... Եօթ ամսվայ մէջ այսպիսի փոփոխութիւն մի լրագրի հայեացքների մէջ. բայց ոչ. սա մի զարմանալու բան չէ. մենք գիտենք և դուք. պ. Պապաջանեանց, ինքներդ էլ գիտէք թէ՝ ինչ շարժառիթներ էին ստիպում ձեզ իւղել ուսանողների գլուխը. Մենք այդ կը ցոյց տանք փոքր ինչ ներքև.

* * *

«Ապացոյցներ, պատմական փաստեր, օրինակներ, իրողութիւններ...» գոռում է «Մեղու Հայաստանի». Որքան էլ պատմութիւնից վերցրած օրինակներ ցոյց տաս, որքան էլ փաստեր աչքի առաջ դնես, նա դարձեալ շարունակում է ասել թէ՝ «Մշակը» առանց փաստերի է խօսում և այլն և այլն. Մի և նոյն քաղաքականութեան հետևեց և «Պսակը»

„Պսակին“ աշխատակցում են Էջմիածնի երկու երեսելի պաշտպանողներ Թ. Զ. և ՑՎ.Մ. Մենք չենք իմանում թէ՝ ոյք են այդ պարոնները, բայց թէ դրանց յօդուածների սխօլաստիկական ձևերից, թէ ոճից, թէ, վերջապէս, լոգիկայից երևում է թէ հոգևորականների որ կարգից պէտք է լինեն.

«....Մեք (Թ. Զ. № 30) միշտ կը պաշտպանենք Էջմիածնի նշանակութիւնը... (և այլն)..., բայց եթէ երբէք կատարվեն նորա մէջ այնպիսի իրողութիւններ, որոնցով կարող է վայր ընկնել նա, մեք... չենք զլանալ նաև այդ իրողութիւնների դէմ յարձակվել...»

«...Էջմիածին և Էջմիածականներ—սոքա բոլորովին տարբեր բաներ են, որոնց չէ կարողանում «Մշակը» իրարից որոշել....»

Մթթէ այստեղ հարկաւոր են որ և իցէ բացատրութիւններ. այս սոֆեստիկական ձևերը ամենքիս համար ակներև են. Կարծես պ. Թ. Զ. չէ իմանում, որ «Մշակը» եթէ յարձակվում է Էջմիածնի անգործունէութեան վրա, այդ չէ նշանակում թէ «Մշակը» հերքում է, որ Էջմիածինը (իբրև ազգային հիմնարկութիւն) կարող է մեծ դեր խաղալ ազգային պատմութեան մէջ, ինչպէս և խաղացել է մի քանի անգամ, կարծես Թ. Զ. չէ հասկանում, որ Էջմիածնի վրա յարձակվել նշանակում է՝ յարձակվել նորա մէջ այժմեան գլխաւոր գործիչների վրա...

Ահա Էջմիածնի այս երևելի պաշտպանողը ինչպէս է ուզում պաշտպանել Էջմիածինը.

«....քանի քանի անգամ Էջմիածինը հաշիւ տուաւ Ալաշկերտցուց փողի մասին, քանի քանի անգամ ասուեցաւ թէ հանգուցեալ Այվազովսկու բոլոր գրութիւնները ամբողջ և անվնաս պահվում են Էջմիածնում, բայց «Մշակը» դեռ այժմ գոռում է թէ այդ փողերը կերուած են (?), դեռ ճչում է թէ այդ գրութիւնները բոլորը (?) այրուած են....»

Ինչ կը վերաբերի ալաշկերտցուց փողերի մասին, այժմ էլ ոչ ոքի համար գաղտնիք չէ այն, ինչ հաղորդեց Հայկակը (Մշ. № 178), այսինքն՝ սեպտեմբերի 26-ին եղել է Կ. Պոլսում ազգային ժողովի նիստը և ըստ առաջարկութեան պ. Պ. Փափազեանի որոշվել է խնդրել Վ.Հ. Կաթողիկոսին, որ ժողոված դրամը գործածվի իր նպատակին.

Մեղ ամենքիս յայտնի է, որ այդ փողերը մինչև անգամ հանգստութիւն են վայելում Էջմիածնում. Ուրեմն «Պսակի» մայիսի համարի մէջ (8) մի ուրիշի՝ պ. ՑՎ.Մ-ի միջոցաւ ասել է հետևեալը.

«... Էջմիածնի վրա խօսած ժամանակ գոնէ պէտք է թերթէր («Մշակի» խմբագիրը) նրա պաշտօնական օրգանը. Այդքան վայր ի վերոյ յարձակումներից յետոյ կը խոստովանի արդեօք պ. Արծրունին թէ ինքն սխալվել է, եթէ նրան ցոյց տան անցեալ տարվայ (այս 1879) հոկտեմբերի ամսատետրում տպուած, որ օգոստոսին առած են ալաշկերտցուց փողերով.... (այս ինչ) ....արժեստամակներ... և այդ դրամի գործադրութիւնը յանձնված է Կ. Պոլսի Դպրոցասիրաց Արևելեան ընկերութեանը. Ի՞նչ արժէք ունեցան «Մշակի» առաջնորդող յօդուածներով պահանջները»

Ասել այդ խօսքերը, ասում ենք, մենք, լրութիւն չէր... բաւական չէ, որ «Արարատը», Էջմիածնի օրգանը, քնացնում է ժողովրդին, որ «Պսակն» էլ մի կողմից նրա օգնական է հանդիսանում...

Զուարճացէք, ընթերցող, թէ ինչ կարծիքի են Էջմիածնի պաշտպանողները (նոյն իսկ № 8).

«.... Ոմն Բաղ. Արծրունին մի քանի կօպէկ նուիրելով (լ հարկէ ազգի պահանջները լրացնելու նպատակաւ), նոյնպէս և շատերը կարծես իրաւունք են ստանում պահանջող լինել... (պահանջել Էջմիածնից որ այդ կօպէկները իր նպատակին գործածվին)...»

Սրան, Էջմիածնի պատուելի պաշտպանողներ, ասերէն կասեն. «Вотъ тебѣ и разъ!»

պարտամուրհակները հօրս ձեռքին է, խաբելով տանում է իր այգին և այնտեղ խեղդում իր որդու և մի քանի պատրաստած աւազակների հետ։ Այդ սպանութեան համար անցեալ տարի տէր-հայրը իր որդու հետ տնքում էին Երևանի բանտումը։

Գալով այն հանգամանքին, թէ հայերը առհասարակ լաւ չէին վարվում բողոքականների հետ, դորա մասին ես ոչինչ չունեմ ասելու։ Եթէ պ. Վրոյրը դարձեալ կը պնդի իր ասածը հօրս վերաբերութեամբ, թող բարեհաճի գալ ինձ մօտ և ես ցոյց կը տամ նրան տեղոյս նահանգական դատարանում (Окружный судъ) մի հատ գործ, որը գոյացաւ հօրս սպանութեան առիթով։ Բայց թէ ինչու չարագործները չը ստացան իրանց արժանաւոր պատիժը,—դորա պատճառը ես չը գիտեմ։

Հաճեցէք, պ. խմբագիր, ճշմարտութեան անունով իմ այս նամակին տեղ տալ ձեր յարգելի լրագրի առաջիկայ համարում։

Աշոտ Ա. Տէր-Վարդանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ելենովկա, 22 դեկտեմբ. 80

Այսօր իմ խանութիս մէջը հաւաքված մի քանի երիտասարդներ, «Մշակ» լրագրի թերթը ձեռքերին, կարդում էին հետաքրքրական կերպով այն յօդուածները, որոնց մէջը նկարագրված էր Վանայ սովատանջների ցաւալի վիճակը, թէ սովը դեռ ևս շարունակվում է և նրան շատերը կամայ ակամայ զոհ են մատնվում, և թէ նրանց կեանքը փրկելու համար սաստիկ հարկաւորութիւն է զգում սովելոց խնամող ընկերութիւնը։ Այս հանգամանքները խօսակցութեան նիւթ դառնալով երիտասարդութեան մէջ, նոցանից իւրաքանչիւրը առաջարկեց իր ցանկութիւնը, նուիրել իր լումայն յօգուտ նոյն սովելոց։ Այս կերպով իսկոյն հանգանակվեցաւ 32 բուբլի, որպիսի փոքրիկ նուէրը ուղարկելով յարգելի խմբագրիդ, խնդրեմ հասցնել ուր որ հարկն է, յիշելով նուիրատուաց անունները «Մշակ» պատուական լրագրիդ մէջ։

Գէորգ Բաղդասարեան Բուրնազեանց 5 ր., Իգնատիոս Բաղդասարեան Բուրնազեանց 5 ր., Ներսէս Վարդանեան Աղվղեանց 2 ր., Խաչատուր Տէր-Աբրահամեանց 1 ր., Աղաբէկ Վարազարեանց 3 ր., Նիկոլայ Ցարութիւնեան 1 ր., Գասպար Բաղդասարեան Բուրնազեանց 1 ր., Գրիգոր Յովակիմեան 50 կ., Ենոք Փիլօեանց 1 ր., Խաչատուր Վարդանով 1 ր., Հայրապետ Սըտեփանեան 1 ր., Յակոբջան մահտեսի Պետրոսեան 1 ր., Յովհաննէս Էլիզբարեանց 3 ր., Մալխաս Մուրադով 2 ր., Աղոյ Առաքելով 1 ր., Քեարիմ Ակեաբ-օղլի 1 ր., Իբրահիմ-Հաջի-Մահմադ-Ալի-օղլի 1 ր., Կասում-Քիալբալայ-Մահմադ օղլի 50 կ., Հայրապետ Բաղդասարեանց 50 կ., Խաչօյ Մկրտչեան Աւետեանց 50 կ.։ Ընդամենն է երեսուն երկու բուբլի։

Իգնատիոս Բուրնազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք պ. Տիգրան Տէր-Օհանեանցի ձեռքով 94 բուբլ 18 կ., որ հանգանակված էր Սպահանի մէջ յօգուտ Վանի սովատանջների։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ, պ. Գր. Խալաթեանից ստացանք 100 բուբլ, որ Մոսկվայի հայ ուսանողները հանգանակեցին յօգուտ Վանի սովատանջների։ Միւս անգամ պարոնը խոստանում է ուղարկել մեզ նուիրատուների ցուցակը և մնացած փոդերը։

—

Ստացանք մեծ շնորհակալութեամբ կոյս Հռիփսիմէ Թայիրեանցից տէր-Եղնիկ քահանայ Երզնկեանցի «Դատարկ հայկական ձայնագրութեան», որ կոյս Թայիրեանց իր ծախսով հրատարակած է։ Գրքոյկը տրված է Էջմիածնի տպարանում։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարի քաղաքային կլուբը ստանում էր հայ լրագիրներից միայն «Մշակը», իսկ այս տարի բացի «Մշակից» կը ստանայ և «Փարոս Հայաստանի» հանդէսը։ Շատ ուրախ ենք, որ այստեղ հետզհետէ հայ հրատարակութիւնների ընթերցողների թիւը շատանում է։ Այստեղ բացվելու է շուտով և մի ազնուական կլուբ»։

—

Սղնախից մեզ հաղորդում են, որ այս տարի արտերը լաւ են, բայց թանգութիւնը դեռ ևս շարունակվում է։ Ապրիլի պուդը ծախվում է 2 ր., մսի ֆունտը 10 կ., իսկ գիւղացի կանանց բերված կենսական պիտոյքները աւելի էլ թանգ են ծախվում։

—

Պ. Մարտիրոս Նաբաթեանցից, ԳԱՆՁԱԿԻՑ ստացանք 275 բուբլ, որ պարոնը հաւաքած է հանգանակութեամբ յօգուտ Հայաստանի սովատանջների։

—

Երէկ մի տխուր լուր տարածվեց քաղաքում։ Հայազգի գեներալ Արշակ Ցարութիւնեան Տէր-Ղուկասով յանկարծակի վախճանվեց Թիֆլիսում։ Երէկ, յունվարի 9-ին հանգուցեալին Լօնդոն հիւրանոցից տարան վանքի մայր եկեղեցին, և թաղման հանդէսը կը կատարվի կիրակի օր, յունվարի 11-ին։ Դրեթէ ամբողջ քաղաքը ներկայ էր գեներալի յուղարկաւորութեան հանդիսին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԻԵՎ, 7 յունվարի։ „Кіевлянинъ“ լրագիրը հաղորդում է. Կիրակի, յունվարի 4-ին Կիեվի մէջ տեղական ժանդարմական վարչութեան կարգադրութեան համեմատ կալանաւորված են չորս անձինք, երկու կին և երկու տղամարդ, որոնց կասկածում էին, թէ նրանք պատկանում են յեղափոխական յանցաւորների ընկերութեանը։ Կալանաւորվածների բնակարանը խուզարկելու ժամանակ գտնվեցան հարաւային բանւորների միութեան պրոգրամները չափազանց տերորական ուղղութեան։ Այդ պրոգրամները նպատակին հասնելու համար առաջարկում են՝ հրդեհաձգութիւններ, քաղաքական սպանութիւններ և այլն։ Բացի այդ գտնված են զանազան ձևի զէնքեր՝ ռէվոլվերներ, դաշոյններ, տապարներ և ամեն բան, ինչ որ հարկաւոր է կեղծ անցագիրներ շինելու համար, մօտ 20 կեղծ կնիքներ, գաղտնի տպարանի պատկանելիք և բաւական քանակութեամբ շրջաբերականներ բանւորների հարաւային միութեան կողմից։ Կիեվի զինուորական արհեստանոցներից մէկի կառավարչի սպանութեան մասին։ Շրջաբերականները կազմված են դատավճռի ձևով, խօսում են սպանութեան մասին, իբրև կատարված իրողութեան վրա և երևի պէտք է տարածվէին սպանութեան կատարմանից յետոյ։ Ասում են, որ այդ յանցաւորը նպատակին հասնելու համար բոլոր պատրաստութիւնները արված էին, բայց նրա իրագործմանը խանգարեց ժանդարմական վարչութեան կարգադրութիւնը, որ վաղուց հետևում էր յանցաւորներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Երէկ յունվարի 7-ին մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ աւագը ուղևորվեցաւ արտասահման։ Երէկ հասաւ Ս. Պետերբուրգ երևելի ճանապարհորդ Պրժեվալսկի։ „Голосъ“ լրագրին հեռագրում են Լօնդօնից յունվարի 7-ից. պատերազմական նշանակութիւն ունեցող մի քանի անգլիացիների առաջարկութեան համեմատ անգլիական կառավարութիւնը վճռեց էլի մի քանի ժամանակ թողնել իր զօրքերը Կանդահարի մէջ։

ՐԻԳԱ, 7 յունվարի։ Օֆիցերական ժողովի մէջ ճաշ տրվեցաւ „Голосъ“ լրագրի թղթակից պ. Սոլովէօվի ակամայից հեռանալու պատճառով, որը գրում էր Բաուտենֆելդի գործի մասին։ Ճաշին ներկայ էին գանազան առանձին զէնքերի օֆիցերներ և այստեղի ռուս հասարակութեան ներկայացուցիչները։

ԿԻԵՎ, 7 յունվարի։ Կիեվի նահանգը վերաքննող սենատոր Պոլովցով հիւանդ է, բայց չը նայելով հիւանդութեանը, չէ դադարեցնում աշխատանքները։ Գլխաւոր-հանգապետ Ջերտկով հրաժարվեց իր պաշտօնից։

ՓԱՐԻԶ, 8 յունվարի։ Մադրիդից հեռագրում են, որ սպանիական ազգային ժողովը զբաղված էր վիճաբանութիւններով թագաւորի գահական ճառին պատասխանելու համար։ Մի քանի պատգամաւորներ ընդդէմ էին Գերմանիայի հետ դաշնակցութիւն կապելու։ Կանովաս-դէլ-Կաստիլիոյայտնել է, որ Գերմանիայի հետ դաշնակցութեան մասին լուրերը անհիմն են և որ Սպանիայի այժմեան յարաբերութիւնները Ֆրանսիայի հետ աւելի լաւ են, քան թէ որ և է ժամանակ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 222 ր. 50 կ., երկրորդ 221 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 92 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 83 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 25,25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, Փարիզի վրա 265 ֆրանկ։ Բօրսայի արամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ուրեմն նուիրողը պէտք է նուիրէ, իսկ մնացածը նրա բանը չէ... ուրեմն սառնասիրտ նայենք ինչպէս Էջմիածնում գողանում են, ինչպէս արեղաները ազգային ցորեն և խոտ են կրում (№ 28) այն ժամանակ, երբ տասը հազար հայեր սովից մեռնում են... ուրեմն ուշադրութիւն չը դարձնենք Էջմիածնում կատարվող հետևեալ հրաչքների վրա։

«... 300 սայլ խոտ 40 տավարը կերել սպառել են եղեր և այն՝ Մայիս ամսում դաշտերի խոտաւէտ ժամանակ... և այլն և այլն («ես չեմ» № 28)։

Մթթէ Էջմիածնի պաշտպանողները կարծում են, որ հասարակութեան ամեն մի անդամ իրաւունք չունի պահանջել, որ հասարակական միջոցները ծառայեն իրանց նպատակին,—որ ամեն մի հայ իրաւունք չունի պահանջել իր ազգային հիմնարկութիւնից, Էջմիածնից, որ ազգային սեփականութիւնը չը յափշտակվի, որ նա ազգային պիտոյքներին ծառայէ....

* * *

Դառնում ենք Թ. Զ.-ի խօսքերին հանգուցեալ Այվազովսկու գրուածքների վերաբերմամբ։

Պարոն, նայեցէք «Փորձ» ամսագրի այս տարվայ № V. դուք կը տեսնէք, որ Այվազովսկու մահից յետոյ իսկոյն՝ այսինքն ապրիլի 12-ին Թիֆլիսի տպագրական ընկերութեան վարչութիւնը կազմել է արտաքոյ կարգի նիստ և գրութիւն է ուղարկել Ընկերութեան պատուոյ անդամ՝ Վեհափառ Կաթողիկոսին, որով թոյլտուութիւն է խնդրել Նորին Վեհափառութիւնից աչքի անցնել նոյն իսկ ընկերութեան պատուոյ անդամ հանգուցեալ Այվազովսկու մահից յետոյ նրա մնացած գրուածքները և յարմար գտած գրութիւնները անմիջապէս տպագրել. և ինչ էք կարծում, պ. Թ. Զ...—մինչև այժմ ընկերութեան վարչութիւնը սպասում է պատասխանին....

Էջմիածնում, երևի, աւելի յարմար են գտել հաւատ ընծայել մի սնապիսին, որը հանգուցեալի մահից յետոյ ուղարկվեց Թիֆլիս և մինակ քրքրում էր հանգուցեալի գրուածքները և, ինչպէս ականատեսները վկայում էին (տ. «Մեղու Հ.»), պատռտելով նրա գրուածքները, ածում էր Քուրը. այսպիսի մի սնապիսին աւելի հաւատ են ընծայում, քան թէ մի կազմակերպված ընկերութեան։

Պատճառը....պատճառը յայտնի է ամենքին։

Եթէ Էջմիածինը աչքի առաջ չունենար ոչնչացնել հանգուցեալի մի քանի «վնասակար» գրուածքները, նա, ի հարկէ, առանց ուշադրութեան չէր թողնի Թիֆլիսի ազգային տպագրական ընկերութեան օգտաւէտ առաջարկութիւնը....Մթթէ հարկաւոր են աւելի համոզիչ ապացոյցներ, որ Այվազովսկու շատ և շատ գրուածքների երեսը էլ ոչ ոք տեսնելու չէ....

* * *

Թողնենք, ընթերցող, Էջմիածինը և նրա պաշտպանողներին, որոնք յանուն Էջմիածնի պաշտպանութեան, բաւականին մոռացին «Պասկի» էջերը։ Այդ պաշտպանողների թիւումն է և ինքն պ. Վ. Պապաջանեանց, որը նոր տարուց նշանակված է Էջմիածնի ճեմարանի բարձր դասատնում (եթէ չեմ սխալվում) վերացական փիլիսոփայութեան ուսուցիչ։ Մանրամասնութիւններ, որոնք բաւականին ծանօթացնում են պ. Պապաջանեանցի պուբլիցիստիական դիմակի հետ, կարող էք գտնել «Մշակի» № 217 Երևանից գրած թղթակցութեան մէջ։

«Պասկը» նոյնպէս և մանկավարժական թերթ է։ Այդ բաժնի գլխաւոր վարողը պ. Կ. Ս.—է։

Այս պարոնը տպել է մի ամբողջ շարք մանկավարժական գրուածքների։ Սկսում է դա նրանից, որ հայերիս «Յառաջադիմութիւն հարկաւոր է» (№№ 4, 5). յետոյ իբր թէ ցոյց է տալիս «Ազգային յառաջադիմութեան կարճ ճանապարհը» (№№ 6, 8). սրա մէջ ցոյց է տալիս, թէ ամեն մի դասակարգը (հայրերի, եղբայրների, երիտասարդների և մանուկների) ինչպէս պէտք է գնայ յառաջադիմութեան կարճ ճանապարհով, որից իմացվում է միայն այն, որ ամեն մի դասակարգը պէտք է գործի ուսումնական գործի... Կ. Ս. գործը սկսել է և իհարկէ պէտք է վերջացնի և ահա № 15-ում առաջարկում է «Յառաջադիմութեան մասին հայրերի հրահանգը»։

Անկասկած Կ. Ս. պէտք է շարունակէր իր այդ մանկավարժական յօդուածների շարքը և առաջարկէր «Պասկի» ընթերցողներին «Յառաջադիմութեան մասին եղբայրների հրահանգը», «Յառաջադիմութեան մասին երիտասարդների հրահանգը» և այլն և այլն, եթէ իր ժամանակին պ. Ս. Դաղեանցը դրա ճանապարհը չը կտրէր։

Մենք ներքև կը վերադառնանք պ. Դաղեանցին. առ այժմ կաշխատենք ծանօթացնել երևելի մանկավարժի, Կ. Ս—ի, գաղափարների հետ, այս երևելի բէֆորմատորի հետ։

«Յառաջադիմութիւն»-ը, ընթերցող, ըստ «Պասակի» փիլիսոփայ-մանկավարժ Կ. Ս.-ի ահա ինչ է.

«Ամենայն ազգաց պատմութիւնները կը հաստատեն, թէ մարդս յառաջ աւելի վայելչութիւն ունէր (!), աւելի էր ապրում, քան թէ այժմ. (Տէր ողորմեայ). այս պատմական ճշմարտութեան վրա մտածող որ և է մարդ կը զգայ անչուշտ, թէ մարդս իր բարի վայելչութիւնը կորցրել է և թշուառութեամբ է ապրում (Տէր ողորմեայ)։ Այս զգացումը թելադրում է մարդու մէջ մի բուռն ցանկութիւն, որ կարող չէ հասնել նախնեաց վայելչութեանն ու հանգստին (!!!)։ Այս նպատակն յայտնելուց յետոյ բան չի պակասիլ մարդուն, բայց միայն չարժում մի, որով յառաջ կը գնայ և կը հասնի նախնեաց վայելչութեանը։» (!! Տէր ողորմեայ)։ Այսպիսի դատողութիւններից յետոյ մեր երևելի փիլիսոփան հասնում է ահա ինչին.

«Այս վայելչութեան ցանկութիւնն, որ ժիրընակ թելադրվում է ամենայն (?!) մարդու մէջ, հաստատում է բացարձակ կերպով, թէ յառաջադիմութիւնն հարկաւոր է» (№ 4) !!.. Տէր իմ Աստուած։

Ուրեմն, ընթերցող, դուք տեսնում էք, որ այն, ինչ մենք ամենքս անուանում ենք «յետադիմութիւն» (յետ մղել մեր նախնեաց դրութեան հասնելու նպատակաւ), ըստ Կ. Ս.-ի, ըստ «Պասկի» կարծեաց «յառաջադիմութիւն» է!!!....

(Կը շարունակվի)